

ԻՐԱՆՈՒՆԷՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՔԻԻ ԵՒ ՇԱՔԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտոնային համար Տարեկան 12 ֆր.
» » Կեցականայ 6 ֆր.
Արտատպանի համար (երկու փուլ մեկ ծրարով) Տարեկան 14, Կեցականայ 7 ֆր.
ԿԱՆՈՒՆ ԿԸԱՐԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկն հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՆՈՒՆԷՔ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պաշտոնային)
Редация на ВѢСТНИКЪ
«И правуникъ»
ВАРНА (България)
Rédaction du journal
„Ira vounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն եւ չեն դրկուիր եւ յարմար դատարանէր միայն կը հրատարակուին աւ. րողքովին կամ մասաւր:
Խմբագրութեան տողը 20 սանթիմ. երեւ. քանակը անգամներու համար 20 0/0 գեղջ կը շինի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՀՈՒԱՆՏԱՅԻ ՄԷՉ

Լա Հէյէն կը գրեն մեզ.

Տ. Մինաս Չերազ, Հոլանտա. կտն խորհրդարանի բողոքական, պապական եւ ազատական անդամ. ներքին եւ մամուլի ներկայացուցիչ. ներքին յատուկ հրաւեր ստացած ըլլաով, քաղաքիս ոստիկանութեան արգելած բանախօսութիւն. ներքին աւելի կծու բանախօսութիւն մը պատրաստեց եւ անոնց նախագահութեան տակ արտասանեց յուլիս 7ին յԱմստերտամ եւ երեկ գիշեր (յուլիս 11) Ի Լա Հէյ ահագին բազմութիւն անակարա. գրելի ոգեւորութիւն:

Ամստերտամի մէջ Տ. Չերազի բանախօսութիւնէն առաջ Տօքթ. Քիւրիէր հետեւեալը ճառախօսեց.

Տիկիններ եւ Տիարք

Մեր Լա Հէյի իշխանութիւններուն պիտի գարձուածքներէն գոյթակալած, իմ պատուարժան պաշտօնակիցներս եւ ես անմիջապէս ըմբռնեցինք թէ բացարձակապէս հարկաւոր էր միմիայն Հալատանի դատին նուիրուած հանգիստը գումարում մը կազմակերպել նոյն իսկ Մայրաքաղաքին մէջ:

Այն ժամաւ կոտորածներուն առնոյն որոնց ողբալի զոհերն եղան Հայերը իրենց լեռներուն, Կ. Պօլսոյ եւ քաղաքի Ասիոյ բոլոր վիլայէթներուն մէջ, մեր սիրտերը զարթոյթեց սարսափեցան, մեր հոգիները անպատու գտնուեցին մը յոռեցան:

Այն չարաշուք տեսարանը որ այդ ազնուալի օրերուն մէջ պարզուեցաւ Արարատի կողերուն վրայ եւ մինչեւ Եւրոպայ Գէօզի պաշտօնի ստուերին մէջ, կոտորած մըն էր որ մեզի քառամեկուց, շարդ մը աւելի քան անամային եւ ըմբռնեցուցիչ, նախատինք մըն էր մարդկութեան համար եւ անարգանք մը քրիստոնէութեան անուան: Եւ երբ տեսանք որ քրիստոնէայ Եւրոպայ, այս ահարկու եւ վայրագ տեսարաններուն հանգէպ, իր թեւերը կը ծալէ եւ

խուլ կը ձեւանայ կրտսթոնի կոչին որ միակ համարձակեցաւ մարդասպան մը մարդասպան մը կոչել, ծայրագոյն կսկիծէ եւ մոթահարութենէ ճնշուեցանք եւ հոլանտացի բոլոր ժողովուրդը, առանց կուսակցութեան խտրութեան, իրիստ կերպով եպերեց գիւտնագիտութեան անկարողութիւնը եւ յանցապարտ վատութիւնը, այն գիւտնագիտութեան որ կըստիպուէր աչք գոցել հոն ուր այնքան չարիք կը գործուէր:

Անկէ ի վեր, ամեն տարի, հայկական ցեղին արեան աղաղակը դադարած չէ մեր ականջն ու սիրտը ծակելէ: Եւ ահա հիմա խաղաղութեան ժողովը կը գումարուի, կը գումարուի Անտառի Տան մէջ, Օրանտիան այն իշխան. ներուն խաղաղիկ բնակչութեան մէջ որոնք իրենց արիւնը թափեցին ճնշուած ազգերու ազատութեան համար: Եւ... Թրանսվալ հոն չընդունուեցաւ, Օրանտի ազատ պետութիւնը անկէ դուրս ձգուեցաւ եւ Հայերը որոնք հոն կը գիւտնէ Եւրոպայի բարձրագոյն Դատարանին ներկայացնելու իրենց դառնագին գանգատները, իրենց առջեւ դռները փակուած կը գտնեն, նոյն իսկ Չարին յատակագին տրամադրութեամբը: Եւ երբ այս նախատուած ժողովուրդին փառաբանը կուգէ հանրութեան գիմը իր սուրբ դատը պաշտպանելու համար, այն ատեն ալ մեր իշխանութիւնները իրեն առջեւ դժուարութիւններ կը յալուցանեն եւ մինչեւ իսկ վայրկեան մը կը յաջողին խղզել նահատակներուն ձայնը:

Իրօք, Տիկիններ եւ Տիարք, ամօթահար կը կարմրինք տեսնելով որ այնքան մեծ վիշտի նը համար յարգանքի այսպիսի սրկատութիւն մը ծանրանայ մեր վրայ, նոյն իսկ այն վայրկեանին ուր ամբողջ աշխարհ իր աչքերը սեւեռած է մեր հայրենիքին վրայ: Իբրեւ հայրենասէրներ ինքզինքնիս նախատեսած եւ անարգուած կըզգանք ամբողջ Եւրոպայի առջեւ: Եւ երբ կարգացինք ինչ որ օտար մամուլը այս առիթով իրաւ

ւամբ մեր երեսին զարկաւ, տաք երկաթ մը մեր երեսը այրեց:

Ամեն ժամանակ մեր սիրելի հայրենիքը հալածեալներու պատսպարանը, ճնշուածներու վերջին ապաստանարանը եւ բռնակալութեան ու տիրապետութեան բոլոր զոհերուն համար փրկութեան նուա. հանգիստը եղած էր: Ուրիշ տեղիւ խղզուած ձայնի ազատութիւնը այս նուիրական հողին վրայ վերստին շունչ կանչէր, Օրանտ. ներս գիւտնային «պիտի պահպանեմք» տակ: Մեր մամուլին մէջ տպագրուեցաւ ամեն ինչ որ պիտի արգիւտէր ամենէն ընդարձակ միապետութիւններուն մէջ: Հոտ էր մեր հայրենասիրական հպարտութիւնը, այդ էր մեր ազգային փառքը:

Եւ հիմա ամբողջ Եւրոպա մեզի այնքան աշխատեցաւ եւ մեր նախնիքներուն տաքիւնութիւններէն յայնքան հեռացած պիտի կարծէ որ Սուլթանին ճնշումին ներքեւ կը համարձակինք խօսքի ազատութիւնը զանալ այն կոտորածի զոհերուն որ այս դարավերջին արատը պիտի մնայ միշտ:

Արդ մեր հայրենիքը այս ա. նարգանքէն մաքրելու միակ միջոցը բոլոր աշխարհի ցուցնել էր թէ մեր ոստիկանութեան գծուած յարձակումները ոչ միայն հանրութեան զգացումներուն չէին հաւաքատախանիք, այլ եւ առանց քերականութեան դատապարտուած էին բոլոր ազգէն: Բաւերադարձ մեր մամուլը հազուադէպ միաձայնութեամբ մը սաստիկ եւ անկաղար բողոքեց: Մեր բոլոր չըջանալիներուն մէջ, ամեն ճառերուն մէջ մէկ ձայն մը միայն լուռուեցաւ, հանդիսաւոր ձայն մը որ նշաւակեց այդ նախատինքը ազգային պատիւին դէմ, այս անարգանքը մարդկութեան խղճին դէմ, այս լինամանքը վշտի սրբութեան դէմ:

Մեր սքանչելի Պարզեմտիք շատ լաւ գտաւ: Թէեւ Հոլանտական գաւառներին տակ կը խոնարհի Սուլթանին առջեւ. բայց այս առիւծը կը շարունակէ գարշել իր

այս նախատեսումէն իր ազին կը շարժէ, կը բարձրացնէ, կը կանգնեցնէ եւ կը տարուբերի խրոխտաբար: Ահա ասոր համար ուղեցինք եւ պնդեցինք որ նոյն իսկ մայրաքաղաքին մէջ, կեանքի այն կեդրոնին մէջ ուր կը բարատեւ ամբողջ երկրին սիրտը, «պանդանոցի ոչխարը», «մահուան որդին» եղող այդ ժողովրդի փառաւորաններէն մէկը իր սրտի անձկութեան ձայնը բարձրացնէ: Եւ բազմաւոր ենք որ անոնցմէ մէկը հաճեցաւ պատասխանել մեր հրաւերին. եւ արդէն կը փափաքինք զինք մտիկ ընել:

Ուստի մեծ պատիւ կը համարիմ ինծի փութալ ներկայացնել ձեզի Տ. Մինաս Չերազը, կամաւոր աքսորականը, հաւատարիմ, եռանդուն եւ ձեռնհաս թարգմանը տառապանքներուն ինչպէս նաեւ յոյսերուն այն ժողովուրդին որ այնքան անգութ տանջանքներու ենթարկուեցաւ:

Ինքն է որ Բարիզէն վերադառնալով, կուգայ փրկել մեր Հայրենիքի պատիւը:

Չեզի խօսք կուտամ ուրեմն, Տիար Չերազ, աներկելւ ըսէք, ազատութեան ըսէք ամեն ինչ որ կը փափաքիք ըսել: Պատասխանաւորութիւնը մեր վրայ: Իսկ դուք Տիկիններ եւ Տիարք, Լա Հէյի մէջ պատահածի մասին ներողութիւն ինդրելու իբր նշան ողջունեցէք Տիար Չերազը, ողջունեցէք զինք ջիւղագին ձեր ծափերուն երբեակ հարուածներով:

ՍԻՐՈՒՆ ՀԱՆԴԵՍԸ

Կիրակի օր տեղի ունեցաւ Հայկական կրթարանի վիճակացոյցներու բաշխման եւ Մանկապարտէզի հանդէսը, Սլավօֆի թատերասերահին մէջ, ի ներկայութեան խուռն եւ ընտրեալ բազմութեան:

Թատերարանը գրաւուած էր երկսեռ ուսանողութենէն: Մանկապարտէզի տղայքները ահնահաւոյ տեսարան մը կը պարզէին իրենց միօրինակ սպիտակ համագեւատներով. ի տես զրուած էին սեղաններու վրայ, ձեռագործները

որոնք ամենէ աւելի դժուարահաճ
ու նըրաճաշակ տիկիներու գնա-
հատմանը և գովեստին արժանա-
ցան :

Հանգէսը սկսաւ գեղեցկալուր
«Հայր մեր»ով մը : Հետզհետէ ար-
տասանութեան հայրենասիրական և
ուրիշ բանաստեղծական կտորներ,
հայերէն, պուրկարերէն, ֆրանսե-
րէն և գերմաներէն լեզուներով,
անմասն յաջողութեամբ և ընդ-
միջմամբ ճարտարօրէն առաջնորդ-
ուած նոր երգերու և դաշնակի :
Գիտակից հանգիսականներու բու-
ռըն ծափահարութիւնները ապա-
ցոյց մըն էին անոնց յաջողութեան :
Կերեւի թէ Հայկական կրթութեանը
մասնաւոր ինստիտուտ մը կը տանի
աշակերտաց լաւ ու համարձակ ա-
ռագանութեան : Արտասանուած կը-
տորներու մեծագոյն մասին՝ մա-
նաւանդ ներկայացուած պղտիկ
կատակերգութեան մը մէջ՝ աշա-
կերտք և աշակերտութիւն կատար-
եալ յաջողակութիւն ցոյց տուին :
«Գրագրին» դերը ամեն քննադա-
տութենէ վեր էր :

Հանգէսին երկրորդ մասը գրա-
ւեց Մանկապարտէզը իր երգերով,
արտասանութիւններով ու պարե-
րով, որոնք նոյնքան հետաքրք-
րական ու հրապուրիչ էին : Եր-
գեցին դաշնակի ընկերակցու-
թեամբ : Այդ մանրիկ երեխաները
իրենց բոժոժաւոր տրեխներով,
պարեցին «ճիկ» գերմանական պա-
րը, «պէպէ բօլքա» և «բա տը
քաթա» ներկաներուն խնայողիչ
ծափահարութեանց մէջ :

Հանգէսը փակեց Տնօրէնը բե-
րանացի հակիրճ բանաստեղծութիւ-
նով մը, նկատելով որ օրը տարա-
ժամած էր : Համառօտ տեղեկու-
թիւններ տուաւ վարժարանին հիմ-
նարկութեան, ուսմանց ծրագրին,
կարգերու կազմակերպութեան վը-
րայ և վերջացուց իր խօսքը՝ յուզ-
եալ շեշտերով շնորհակալութիւն
յայտնելով նիւթապէս և բարոյա-
պէս իրեն աջակցող անձնուէր բա-
րեկամներուն, իր բոլոր պաշտօ-
նակիցներուն և հասարակութեան :

Կը շնորհաւորենք Հայկական
կրթարանի Տնօրէնութիւնը, որ
գիտցած էր հանգէսին ամեն աւ-
սարաններուն մէջ լաւը, գեղեցի-
կը ու համեղը ընտրել և նուրբ
ճաշակաւ մը իրարու քով դասա-
ւորել որով ամեն երեւոյթ ներ-
դաշնակ ընծայեց :

Յ. Ս. Ք. Ս

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ԿԱՊՈՒՏ ՀԱՉ. ՇԱՆ ՀԱՉ
(Քօրը Լիւշ)

Կապուտ հազը (պօղոսմաւ Կօֆուրի-
կի. եօրկամա) առ հասարակ ամեն
տարի մէկ կամ երկու անգամներ փո-
ք կամ մեծ համաճարակի մը նման ե-
րեւան կուգայ և շատ անգամ ալ
բազմաթիւ մանուկներու ուղղակի կամ
անուղղակի մահուան պատճառ կըլլայ :

ուստի այս միջոցիս քաղաքիս մէջ
տիրող փոքր համաճարակն յարմար ա-
ռիկ հաճարելով, անօգուտ չէ համա-
ռօտակի առողջաբանական փոքր առ-
տէթիւններու մեր մայրերուն ուշա-
դրութեանը առարկայ ընել :

Կապուտ հազը փոխանցիկ, տարած-
ուող (էքզիսթիւի) եւ միջոցաւոր հի-
ւանդութիւն մըն է. բնականապէս
անգամ մ'ալ բռնու ող մահու կն կամ ան-
ձն անգամ մ'ալ բռնուելէ զերծ է, սա-
կայն հիւանդութիւնը զիստ ամբողջովին
չանհետացած կրնայ իր առաջին սաստ-
կութիւնը վերադառնալ, այսինքն ի դ-
նիւի (ընդլ. ք) ընել :

Այս հիւանդութիւնը միջոցաւոր
հիւանդութիւն մը ըլլալով հանդիմ
մասամբ ալ ջղային է. ըստ ինքեան
ծանր հիւանդութիւն մը չէ, սակայն
իրեն հետք թողնող ուղղակի կամ ա-
նուղղակի հիւանդութիւններն՝ հիւան-
դին վիճակն շատ ծանր և վատագուոր
կրնան ընել :

Աստ ամեն հետեւի թիւներն միաս-
մի թուելու պէտք չիայ. միայն մի
քանի զիջուորներն և կարեւորներն
ըսելով բաւականանաք :

Հազին սաստկութենէն սովորական
բոխտմանը, հիւանդը անանուագ թո-
ղելով կրնան զայն շատ ակարացեալ
նմանապէս ուժով հազն կրնայ յառաջ
բերել ուղեղային արեան խոռոչներու,
արեւանհոսքի, ակնային թմբուկ-
ներուն ծակելուն, նոյնպէս աղեաց
վրայ զօրաւոր ճնշումէն, աղեպփու-
թիւն (էնթալ, ֆալքս եւսթըրը եւսթըրը
ըսուածն) եւն եւն- թիւթեւ պաղառու-
թեամբ իբր անմիջական հետեւանք
կրնայ շնչափողի, թոքի, երեկամուն-
քի (պէօպրէք) բորբոքումներ, շնչա-
փողի եւ ընդհանուր մարմնի զմազմի
(գրաւզ սը շա կոյթ և գրաւզ մէկե-
րալիզ) կողացաւի (քլորէզի, սուլու-
սաթլըճան) հիւանդութեանց տեղի տալ :

Նաեւ իբր հետեւանք այս հիւանդու-
թեանց կրնան առաջ գալ գնդախա-
(վէրէմ) և շնչառութեան խողովակնե-
րուն շուրջը գեղձային ուռուցքներ
(ատէնօթաքի կանկլիօնէտ) որ մշտա-
տեւ շնչարգիլութեան կենթարկէ :

Ասոցմէ գաւ այս հիւանդութիւնը
մասնաւոր յատկութիւն մը ունի իրեն
քաշելու, հարսանիքին (քզամութ) և
կողորդի տեսակ տեսակ հիւանդու-
թիւններն (տիֆթէթի, քուշպօղան եւ
այլն) :

Ուստի ինչպէս կը տեսնուի անմը-
տանդ ըլլալէ շատ հետո է, հետեւա-
բար պէտք է ամեն կարելի միջոց ի
գործ դնել :

Բժշկական դարմանը դեռ հիւանդու-
թեան ընթացքը չը կրնար կասկեցել,
շատ շատ քիչ մը կը կարճցնէ. այս
հիւանդութիւնը 40էն մինչեւ 100 օ-
րի կրնայ տեւել, մինչեւ վից ամիս
ալ շարունակածներն անպակաս են մի-
ջին հաշուով 10 շաբաթ կը հաշուուի :
Հիւանդութեան ընթացքը երեք ընթ-
շան ունի, առաջինն հարբուխայինն է
որ քիթ եւ կուրծքի հարբուխով կը
սկսի. երկրորդ շրջանը ջղաձգական
(զրազմօտիք) հազերէ կը բաղկանայ որ
օրուան մէջ 10-40 անգամներ կը կրկ-
նուին. երբ օրուան մէջ անոնց թիւը
60ը անցնի այն ատեն վտանգաւոր կը
համարուի հիւանդին վիճակը. երրորդ
շրջանը կրկին հարբուխայինն է, որոյ
ժամանակ հազերն կսկսին թուլնալ եւ
իրենց ուժը կորսնցնել եւ տակաւ առ
տակաւ խուլի ելնել :

Առ հասարակ թէ անմիջական եւ թէ
ի վերջոյ ծագելիք հիւանդութիւններն
(քօմբլէքսաիօն) վերջին երկու շրջանին
մէջ երեւան կուգան, որով աւելի ըզ-
գուշութիւն հարկաւոր է :

Ինչպէս ըսի գեռ այժմու բժշկութիւ-

նը այս հիւանդութեան սկիզբը չկրնար
կասեցնել, սակայն երկրորդ շրջանին
մէջ, հազին սաստկութիւնը եւ շուտ
շուտ կրկնումներն նուազեցնելով,
հաւանական եղող հետեւանքներուն
առաջը առած կըլլայ. իսկ երրորդ
շրջանին մէջ ըստ պարագայի պէտք ե-
ղածն ընելով, ապագայ ծագելիք վը-
տանգաւոր հիւանդութիւններն հեռա-
ցնելու կրնայ նպաստել. հետեւաբար
լաւ է որ մէկ կամ մի քանի անգամ-
ներ տնական բժշկին խորհուրդին դիմ-
ուի :

Կապուտ հազի միջոցին ձեռք առ-
նուելիք առողջաբանական միջոցներն.
Նախ՝ օրուան մէջ պէտք է մի քա-
նի անգամներ սննեակին օդը մաքրել,
դռներն եւ պատուհաններն բանալով.
Եւ օդը լաւ եղած օրերուն ալ բացօթ-
եայ պտուղներ ընել տալու է. օդահո-
սանքի մէջ ձգել եւ պաղեցնել զոռ-
շանալու է. ուսելիքներն հազը բըռ-
նելէն անմիջական վերջ տալու է որ
մինչեւ երկրորդ անգամ աքսէն (հազը)
գալուն արդէն մաս մը մարսուած ըլ-
լան եւ անուրջ չի մնայ : Հիւանդութիւ-
նը առաւելի չունի, երբ քիւրու-
թիւն տեսնուի պէտք է գիտնալ որ
վերոյիշեալ հիւանդութիւններէն հի-
ւանդութիւն մը պիտի սկսի. ուստի
շուտով բժշկին դիմելու է. երբ հազը
շատ զօրաւոր բռնէ պաղ ջուրով ե-
րեսը սրբելու եւ ձեռքն գլուխին կըռ-
թնկնելով շփելու է. շատ փոքր աղա-
ցոյ բերին մէջի ժողովուած խուլի
եւ յորձուքը մասով կամ փետուրով
հանելու է :

Փորձով հաստատուած է որ օդափո-
խութիւնը շատ անգամներ հիւանդու-
թեան ընթացքը կը կարճցնէ. հետե-
ւաբար միշտ յանձնարարելի է օդափո-
խութիւնը. մասնաւոր վերջին շրջա-
նին մէջ շատ լաւ կ'աղէ եւ զերծ կը
պահէ կարգ մը ծագելիք հիւանդու-
թիւններէ :

Մաքրութիւնն ալ ձեռքէ ձգելու չէ.
օրուան մէջ մէկ երկու անգամներ ա-
սիտ պօրիկի ջուրով (3 առ 0/0 փոքր
աղոց 4 առ 0/0 աւելի մեծերու) քիթն
ու բերանը, կողորդն և ակնայինը
մաքրելու է :

1 յուլիս 99
Վառնա

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ
ՇԱՀԱՎՈՐՈՂ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԻՆ

«Իրաւունք»ի 29 և 30 թուերով
մենք ներկայացուցինք հայ հասա-
րակութեանը, իմիջի ալոց և
Գահիրէի հայ դերասան Պէնիա-
նին, ամենաստոր ու ամենաան-
խիղճ կերպով, իր ներկայացու-
ցած Արշակ Բ.ով վասպուրականի
հայ սովետաց անունը շահագործող
վարմունքին համար :

Գեղարուեստագէտի կոչման ա-
րատ բերող դերասանը, «Իրա-
ւունք»ի էջերով հրապարակաւ դի-
մամագուրկ լինելէն յետոյ, ալ
ամօթահար ու կորագլուխ եղած,
իր գաղապարտելի վարմունքն
արդարացեալու համար տեղս հրա-
տարակուող «Փիւնիկ» անուն թեր-
խի 7 երրորդ թուին մէջ, առանց
ամաչելու հրապարակ կը գոյ՝ քա-
նի մը իրեն վայել՝ հայհոյանք-
ներով և կլորուած, կոկած ու սի-
րուն գոյներով նախաժ հաշուե-
ցուցակով մը՝ պատասխանելու ի-

րեն քննադատողին :

«Փիւնիկ»ի մէջ անոր թափած
հայհոյանքներն ու հաշուեցուցակը
չէ պատճառը, որ կը պատասխա-
նենք շահագործող դերասանին,
դա կարեւորութիւն իսկ չունէր
մեզ համար, իրականութիւնը,
արդէն իր սեւ գիծը դրաւ դերա-
սանի վրայ, մեզ դրող պատճառն
է անոր, այդ վարմունքէն յետոյ
ըրած նոյնանման շատ ի շատ շա-
հագործումները :

Նախ երկու խօսք հանգէպ իր
գրած պատասխանին ու հաշուե-
ցուցակին :

Ինքը, դերասանը, հարց մը
կուղղէ «Իրաւունք»ի մէջ զինքը
քննադատողին. թէ «թող հաստա-
տէ թէ ազգ. Պատրիարքարանէն
և կամ վստայ կարօտիւններու կող-
մէ պաշտօնով մը եկած է Գահի-
րէ» :

Այսչափ դատարկ, այսչափ ան-
միտ հարց մը իսկապէս միմիայն
այս կարգի ուղեղներէն սպասելի
է . . . :

Հասարակական անձնուէր գոր-
ծիչները, գրողներ, խօսողներ մի-
թէ՛ տիպլօմներ կամ պաշտօնական
վաւերագրե՛ր ունին. թէ անոնց
տիպլօմներ ու վաւերագրեր իրենց
խիղճն ու զգացումն է :

Եթէ այդպէս լինէր, ուրեմն շա-
հագործող դերասան, ձեր ձեռ-
քին մէջ պաշտօնական վաւերա-
գիր մը ունէ՛իք, որ յանդգնու-
թիւն ըրիք վասպուրականի սով-
եալներու անունը յօգուտ ձեզ ա-
ւարի տալու :

Ունէ՛իք : Պատասխանք զա-
բարիական է անտարակոյս :

Դերասանը իր պատասխանի մէջ
յետոյ կը յարէ թէ՛ «մենք սովո-
րութիւն չունինք մեզ դէմ յար-
ձակողներուն պատասխանելու . . .» :

Մենք այս կասեցք : Այն մար-
դիկ, որոնք ոչինչ . . . չունին,
բնականաբար և պատասխանելու
ալ ոչինչ չեն ունենար . . . : Հաս-
կանալի է անշուշտ . . . :

Գալով իր կոկած, կլորած հա-
շուին, ճշմարիտ որ, նողկանք կը
զգանք այդ հաշուէն, երբ կը տես-
նենք որ սովետաց անունով եկած
դրամները ատուենի, զատուենի
կեղծ մազեր, ու է հազուադէ-
րու և կամ թորոս ու մարկոսե-
րու վրայ է ծախսուած . . . :

Այդ ներկայացմանը տոմսակ
վերցնողներէն շատ շատերը, ազգ-
ընթերցարանի վարչութեան կազ-
մակերպած ներկայացմանը ներկայ
չեղան, կարծելով թէ Պէնիանի
տուած ներկայացման արդիւնքը
արդէն իսկ սովետաց համար էր ու
չէ թէ «լիապրօտ» Պէնիանի և
իր նմաններու . . . : Այդ պատ-
ճառով ալ ընթերցարանի վարչու-
թեան կազմակերպած ներկայա-
ցումը բաւականին վնասեց նիւթա-
պէս :

Ուրեմն մէկ իր ներկայացումը
մէկ ալ ընթ. վարչութեան յօգուտ
սովետաց տուած ներկայացումը :

երկուքն ալ կրեցին Պէնյւնի
հարուածները, սովեակներու փշուր
մը հացի գինը երկու իրար ետեւէ
հարուածները ստացան հայ գե-
րասանէն, այն ալ այն քանի մը
ամսուանը մէջ, հապա ինչքան
շահագործող հարուածներով լի է
արեւօք այս արարածի անցեալը,
որի սեւ քողերը մէկիկ մէկիկ վեր-
ցնելու հարկ չկայ, որովհետեւ
ներկան արդէն շարունակութիւն է
իր անցելոյն . . .

Բայց ատոնք տակաւին երկու
հարուածներն էին սովելոց հացին.
այժմ՝ ըսենք երրորդ ու չորրորդ-
ները . . .

Արժանահաւատ աղբիւրներէ կը
տեղեկանք թէ, տեղւոյս աղքա-
տանի մէջ, Օպէրա խտրական
մէջ լինելի վարչութեան կազմա-
կերպած ներկայացումէն քանի-
մը օր առաջ՝ տուած ներկայա-
ցումը որը նոյնպէս մօտաւորապէս
70 ոսկի վնաս տուաւ սովելոց հա-
մար քանի մը օր յետոյ տրուած
ներկայացումը, դարձեալ այս գե-
րասանի, Պէնյւնի դարձուածքն
է եղեր, դարձեալ անոր մատը
խառն է եղեր այդ գործին մէջ,
որը ինչ ինչ միջոցներով յաջողե-
րէ համոզել Աղքատանի միւր-
ջութեանը .

Փոխանակ 75 ի, 150 ոսկույ
գումար մը կըսպասուէր, ինչի
վարչութեան տուած ներկայա-
ցումէն, եթէ ինչպէս կը հաստա-
տեն, քանի մը օր առաջ Օպէրա
խտրական մէջ չը տրուէր Աղ-
քատանի ներկայացումը: Այս
ալ Պէնյւնի երրորդ հարուածը:
Հիմայ չորրորդը:

Ընթերցարանի վարչութեան
տուած ներկայացման խաղերու

մեծ մասը խաղացին իտալացի
յայտնի գերասաններ, երգիչներ,
երգչուհիներ, դաշնակահար ու
ջութակահարներ տառնց որոշ վար-
ձատրութեան մը, այլ մղուած
հայ սովելոց օգնելու բարեսրտու-
թենէն, անձնուիրութեամբ մաս-
նակցեցան, իսկ անդին հայ մը,
գերասան Պէնյւնը 20 ոսկի,
սովելոց դրամէն վարձք ստա-
նալով միեւնոյն գիշեր, խաղաց
միայն «Լէպլէպլի հօրհօր» կա-
տակարարէն կտոր մը:

Այո՛, 20 ոսկի առաւ: Տեսէ՛ք
զոհողութիւնը օտարազգիներուն և
հայ գերասաններուն հայ սովելոց
համար:

Օտարազգիները, որոյ համար
հրապարակու շնորհակալութիւն
նիս կը յայտնենք, քաջութիւն
ունեցան զոհաբերութիւն ընելու
հայերուն համար, իսկ արեւակից
զտնուող հայը 20 ոսկի վարձք
առաւ:

Կը լսենք որ այս կարգի շա-
հատակութիւններ ընող գերասանը
քննադատութենէ ալ շատ կը վախ-
նայ . . . Միշտ մուծին մէջ
գործողներն են որ կը վախնան
քննադատութենէ:

Ուղղամիտ քննադատութիւնը
միակ պայմանն է յառաջդիմու-
թեան, նա է որ շատ վարագու-
րուած գործերու վրայ լոյս կը
սփռէ . . . նա է որ շատ մուծ
անկիւններու մէջ կատարուած ե-
ղելութիւնները ի յայտ, ի լոյս կը
բերէ . . . թափանցիկ կընէ:

Ահա վերջերս Բարիկ մէջ նոյն-
պէս հայ դատերաբեմին արատ
բերող՝ նմանօրինակ շահատակու-
թիւններով՝ Գալֆայիանի մը ար-
ժանաւոր ընկեր գերասան Պէնյւ-

նանը Գահիրէի մէջ . . .

Ահա՛ Պէնյւնի պատկերը:
Իսկ սա նորածին, բայց ճշու-
ճշուուն «Փիւնիկ»ը չը գիտենք,
երեւի դարձեալ խնկարկելու «մար-
մալէն» բռնուած և կամ իրեն ու
ճշմարտութիւններն իրենց իսկա-
կան որոշ գոյներով ու կողմերով
ըմբռնելու անկարողութեան պատ-
ճառով Պէնյւնի պէս անկարա-
գիր տիպեր—«Իսկիւտարի բար-
ձանց վրայ յաւիտենական լուռ-
թիւն երգող Դուրեանի և կամ Ա-
դամանի»—պէս մեծ դէմքերու
հետ վեր է կացեր համեմատու-
թեան դնելու . . .

Կրնայ ըլլալ որ Պէնյւնը բիշ-
մը լաւ խաղացող է, սակայն նը-
կարազրէ զո՛ւրկ մարդ:

Առ այժմ՝ այսչափ մը «Փիւ-
նիկ»ին ըսելով, կըսպասենք որ
նա կարողանայ օրէ օր իրեն դնել
ժամանակակից նպատակարար
ուղղութեանը վրայ:

Իսկ եթէ հարկը ստիպէ, քիչ
մը երկարօրէն կը զբաղուինք սա
«Փիւնիկ»ով:

Գահիրէ Ոսկան-Նազար

Լ Ր Ա Ք Ա Ղ

Ինչպէս գիտենք քանի քանի
շաբաթներէ ի վեր Պատրիարքա-
րանի խառն ժողովը կառավարու-
թեան մատուցանելու համար պաշ-
տօնագիր մը կը պատրաստէր,
որով առկա մնացած ինչ ինչ
խնդրոց կարգադրութիւնը պիտի
պահանջէր: Խառն ժողովոյ վեր-
ջնութիւն երկու նիստերուն օրակար-
գի գլխաւոր խնդիրը այդ պաշ-
տօնագրոյ վերջնական ընթերցու-

մը պիտի ըլլար, և պիտի յանձ-
նարարուէր Պատրիարքին զանի
կառավարութեան ներկայացնել:
Այդ պաշտօնագրոյն պարունակու-
թիւնը հասարակ մահկանացունե-
րէ գողտնի պահուած է ցարդ, որ
կը նշանակէ թէ բաւական կարե-
ւոր հարցեր կը պարունակէ իր
մէջ. և կ'երեւայ թէ այս պատ-
ճառաւ է որ պաշտօնագրոյն վերջ-
նական ընթերցումը շաբթէ շա-
բաթ կը յետաձգուի: Անցեալ չո-
րեքշաբթի որ վերջնականապէս
պիտի լմնար այդ խնդիրը. Խա-
ռն ժողովը յանկարծ զանի կրկին
յետաձգեց, և ազգային թերթե-
րուն պաշտօնագրէն հետեւեալն հա-
ղորդեց:

«Ս. Պատրիարքը և Առնայապետ
Յարութիւն փաշա, որոնք նախըն-
թաց օր կայս. պալատ հրաւիր-
ուած էին, ժողովին հաղորդեցին
ի տեղեկութիւն այն բարեհաճ
բարձրագոյն հրամանները զորս
Օգոստ. կայսրը շնորհ ըրած էր
տալ առկա խնդրոց անմիջական
գործադրութեանը մասին:»

Տեսնենք այդ «բարեհաճ բարձ-
րագոյն հրամաններ»էն ինչ նոր
բարիք կը ծնի: Կը մաղթենք որ
«բարիք»ի «բ»ը «չ» ի չի փոխ-
ուի:

—Յունիս 25 թուակիր պաշտօ-
նական գրութիւն մը կը ծանու-
ցանէ թէ վառնայի մէջ ինպաստ
սովելոց տրուած առաջին ներկա-
յացման հասոյթը 425 Փրանզ
գանձուած է Պատրիարքարանի
կողմանէ և նպատակին յատկաց-
ուած:

—Կրօն. ժողովը գումարուեցաւ
Գշ. Աղգ. Պատրիարքարանի մէջ
ատենապետութեամբ Տ. Գրիգորիս
արքեպս. Յովհաննէսեանի: — 1 Ս.

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (24)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ինչո՞ք հայուն խնդրութեան չափը չը
կար. կրախաղաղական նայուածքով
մը Յովհաննէս աղա Իպրահիմին յայտ-
նեց իր զգացածը իր ըրած ազնուու-
թեան փոխարէն. պալուը ձեռքը չի
անցուցեալ, այնպէս որ ազատ մը
նստաւ ջորիին վրայ առանց կօշիկի,
թիւրտին առնել ձգած ատեն ամբաս-
տանհալը ջորիին վաճառը վճարելուն
հետ նուէր մ'ալ տուաւ տանտիրոջը:
Հիմայ չորս հեծեալները սկսան իջ-
նալ ծէնիզլիի դառիվարը որուն յա-
ջողող դաշտէն առաջանալով ժամէ մը
նորէն միացան Եփրատին որուն եզեր-
քն էին: Առաւօտը մօտ էր ծագելու,
այն սեղեր գտնուող խանիքէն մէկը
հանգստացան. քառորդ ժամէն ճամ-
բանին շարունակեցին դաշտավայրէն-
հեռագիտէ իրենց աջ ու ձախ կողմը
պարզուեցան կիւմիշ մատենի գիւղի-
քը: Կէս օրը անցած էր երբ Գուլէ-
վանքի եւ Պըզլիչէնի մէջէն առաջա-
նալով հասան Գուլ Օվա. ասկից հետք
ճամբորդին առջեւ կը տարածուին այ-
գիւնիւր. դառիվարի գիւղքի մը վրայ
ուրկէ բարձրանալով կը հասնուի Մէ-
զիւրէ որու գագաթն կը հսկէ Խարբիւ-

ղը, կուսակալանիստ 1,500 տունով
եւ 12,000 բնակիչներով: Իպրահիմ
Մէզլիւրէի մօտենալու սկսած ատենէն
Յովհաննէս աղայի զգացուց որ պալու-
ը պիտի անցնէին. ամբաստանեալը
իսկոյն համակերպելով միշտ ջորիին
վրայ ըլլալու պայմանով հանդարտ
հանդարտ կ'ընթանար գառիվերէն ե-
րեք հեծեալ ոստիկաններով չըջապատ-
ուած: Պէտք է ըսել որ զեռ պալուը
չանցուած Յովհաննէս աղա երկու մէ-
ծիտով վարձատրելու ուղեց Իպրահիմը
որ ոչինչ չընդունելով, անոնցմէ մէկ
հատը միայն իրեն ստորագրասեալներուն
բաժնելու խորհուրդը տուաւ:

Մէզլիւրէ հասնելով միեւնոյն պաշտօ-
նական ձեռակերպութիւնները կատար-
ուեցան. պաշտօնաթղթերու ներկայա-
ցում եւ խուզարկութիւն ուրկից հետք
քօմիսէրը հրամայեց որ բանտարաճ ա-
ռաջնորդեն ամբաստանեալը:

Մէզլիւրէի կեղծոնական բանտը, ուր
տարուեցաւ Յովհաննէս աղան ալ,
բաղկատելով Փոքր Ասիոյ ուրիշ տե-
ղիքու բանտերուն հետ դրախտ մըն է.
չէնքը ընդարձակ եւ ըստ բաւականի
առողջապահիկ պայմաններու մէջ կը
գտնուի:

Առաջին գիշերը դատապարտեալնե-
րուն սրահը զրին նորեկ հայը, ուր
մօտաւորապէս վաթսուս բանտարկեալ-
ներ կային, ասոնց մէջ ալ թիւով տա-
սը հայեր. Յովհաննէս աղա անոնցմէ
մէկին անկողինին մէջը անցուց գիշե-

թիչ տեսարանները արեւին առաջին
ցոլքերով շողշողուն՝ չազգեցին վահ-
րամի զգայուն բանաստեղծ հոգիին
վրայ, անիկայ նորէն դէպ հայրենիքը
վերացած էր. յիշեց որ իր ծննդավայ-
րէն սարեր ու ծովեր կը բաժնէին
զինքը. տխուր իրականութիւն մը որ
աղիքները գալարեց եւ ներքին սրտա-
մաշ մտատանջութենէ մը մղուած մատ-
ները ջախջախելու աստիճան ճարձա-
տեց: Այս մտածումներով արբիւր
ծովին խաժ ծփանքներուն յառած էր
աչքերը երբ շոգեհաւին հնչուն սու-
լումը սթափեցուց զինքը. Թօքհանէի
բացէն կանցնէին. շոգեհաւը նաւա-
հանգիստ կը մտնար ուր վերջապէս
խաբխախ նետեց:

Նախն կենալէն հինգ ժամ ետքը
շոգեհաւի ֆրանսացի նաւազնիքէ մին
զինքը դուրս հանեց. վահրամ կառք
մը նստելով Պոլսոյ կողմը իր հօրեղբօ-
րը մօտը գնաց որ ինչպէս ըսած ենք
սեղանաւորութեամբ կը զբաղէր Չա-
թայ խանը:

Մարտիկ աղա տասնհինգ տարիէ
հետէ Պոլիս հաստատուած էր. իր ա-
ռեւտրական գործը աջող պայմաններու
մէջ էր: Պոլիսի մէջ տոկոսով համեստ
գործեր կը դարձնէր. իսկ Պոլիսէն
դուրս Ակնի հետ փոխանագիրի գոր-
ծեր որ իրեն զոհացուցիչ շահեր կը
մատակարարէին:

Շ. Կամսարական
Շարունակելի

